Հայաստանի Հանրապետություն
"Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր" (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.՝ 8267AM

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Ջրօգտագործողների իրազեկման բարձրացման նպատակով հեռախոսային թեժ գծերի ստեղծում ՋՕ ընկերություններում», ISEP/IC/SW-14/001

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար: Ընտրության գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է **«Ջրօգտագործողների իրազեկման բարձրացման նպատակով հեռախոսային թեժ գծերի ստեղծում ՋՕ ընկերություններում»** ծրագրով խորհրդատվական ծառայությունների իրականացման համար բոլոր շահագրգիռ անձանց («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար:

Խորհրդատուի առաջադրանքը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ խնդիրներով.

- Վերլուծել 42 ՋՕ ընկերությունների սպասարկման տարածքներում գործող բջջային օպերատորների առաջարկները և ընտրել լավագույնը՝ ծածկույթի ապահովման, որակյալ կապի և սպասարկման մատչելիության առումներով:
- Նախապատրաստել, կազմակերպել և ապահովել յուրաքանչյուր ՋՕ ընկերության և ընտրված բջջային օպերատորի միջև պայմանագրի կնքման, թեժ գծերի կազմակերպման հեռախոսային համարների և ապարատների ձեռքբերման աշխատանքները:
- Բջջային օպերատորի հետ համաձայնեցնել ձեռքբերված հեռախոսային համարների ելքային զանգերի արգելափակման նախապայմանը, ինչը պետք է հաշվի առնվի նաև ծառայությունների առավել արդյունավետ փաթեթը ընտրելիս:
- Ստեղծել ծրագրային ապահովման (ԾԱ) փաթեթ, ինչը հնարավորություն կտա մուտքագրել և դասակարգել թեժ գծերի միջոցով ստացված տեղեկատվությունը:
- ԾԱ փաթեթները և համապատասխան տվյալների բազաները պետք է տեղադրվեն 42 ՋՕ ընկերություններից յուրաքանչյուրում:
- ԾԱ փաթեթը պետք է ունենա կենտրոնական բազա, ուր պետք է պարբերաբար նույնականացվի ՋՕ ընկերություններում տեղադրված ամբողջ տեղեկատվությունը: Կենտրոնական բազան պետք է տեղադրվի սերվերի վրա, որը գտնվում է "ՋՏԾԻԳ" ՊՀ-ում:

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2014թ. ապրիլին**: Հանձնարարության տևողությունը մոտ **3 (երեք) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է “**Անհատ Խորհրդատուների Ընտրության”** մեթոդով, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՁՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011»* («Խորհրդատուների Ուղեցույցներ»):

Խորհրդատուի որակավորումը և փորձառությունը պետք է բավարարի ստորև բերված պահանջները, բայց չսահմանափակվի դրանցով.

- Ընդհանուր կրթություն;
- Աշխատանքային փորձ կապի ոլորտում;
- Ժամանակակից տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի տիրապետում և ծրագրային ապահովման փաթեթների ու տվյալների բազաների կազմում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ **ժ.10:00–17:00, երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի հանգստյան օրերից**:

Շահագրգիռ անձինք իրենց դիմումները՝ ինքնակենսագրական տվյալներով (CV), հայերեն լեզվով՝ վավերացված տպագիր օրինակներով կամ էլ-փոստով՝ **Adobe PDF** կամ այլ ձևաչափով, կարող են ուղարկել ստորև նշված հասցեով **մինչև 2014թ. մարտի 28–ը, ժամը 17:00**:

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Պրն. Ադիբեկ Ղազարյան, տնօրեն
Պրն. Տիգրան Իշխանյան, ՋՕԸ աջակցող խմբի համակարգող
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
էլ. փոստ՝ aghazaryan@wsdp.am; cc: tishkhanyan@wsdp.am; mcharyan@wsdp.am;

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Տիգրան Իշխանյանին՝
(374 10) 226-596, ժամը 10.00-ից մինչև 17.00-ը (աշխատանքային օրեր)